ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2024թ. հոկտեմբերի 1-5-ը Ուզբեկստանի Հանրապետություն /Տաշքենդ/ կատարած գործուղման արդյունքների մասին

1.Անունը,ազգանունը, զբաղեցրած պաշտոնը՝

Ստեփան Մնացականյան, ՀՀ վիճակագրական կոմիտեի նախագահ

2. Գործուղման վայրը և ժամկետները՝

Ուզբեկստանի Հանրապետություն (Տաշքենդ), 2024թ. հոկտեմբերի 1-5-ը

3.Հրավիրող կողմը՝

ԱՊՀ Միջպետական Վիճակագրական Կոմիտե

4.Գործուղման նպատակը՝

Մասնակցել «Նոր տեխնոլոգիաներ և տվյալների աղբյուրներ վիճակագրությունում» խորագրով ԱՊՀ II միջազգային վիճակագրական համաժողովին և հոկտեմբերի 3-ին ԱՊՀ մասնակից պետությունների վիճակագրական ծառայությունների ղեկավարների խորհրդի 70-րդ նիստին: Համաժողովը կազմակերպվել էր Ուզբեկստանի Հանրապետության նախագահին առընթեր վիճակագրության գործակալության և ԱՊՀ գործադիր կոմիտեի աջակցությամբ:
Համաժողովի նպատակն էր փոխանակել ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման լավագույն փորձը, արդիականացնել վիճակագրական արտադրության գործընթացները թվային վերափոխման համատեքստում, քննարկել այլընտրանքային տվյալների աղբյուրների, մեծ տվյալների և արհեստական բանականության օգտագործման սցենարներ պաշտոնական վիճակագրության ձևավորման համար, վիճակագրական կրթության պահանջները և այլ արդիական հարցեր:
Հանդիպման թիրախային լսարանն էր ԱՊՀ տարածաշրջանի և այլ երկրների ազգային վիճակագրական ծառայությունների ղեկավարները և մասնագետները, ՄԱԿ-ի համակարգի միջազգային կազմակերպությունների ժամանակակից տեխնոլոգիաների ոլորտի առաջատար փորձագետները, պետական մարմինների, գիտական հանրության, բարձրագույն ուսումնական հաստատությունների, բիզնեսի և լրատվամիջոցների ներկայացուցիչները:

5.Քննարկված թեմաները՝

Համաժողովին քննարկվել են հետևյալ թեմաները. Տվյալների կառավարում. տեղեկատվական ռեսուրսների ինտեգրում ազգային մակարդակում, Վիճակագրական կրթություն. մարտահրավերներ և առաջնահերթություններ, Վիճակագրական տվյալների հավաքագրման, մշակման, վերլուծության և տարածման նոր տեխնոլոգիաներ, Մեծ և վարչական տվյալներ, Արհեստական բանականություն և պաշտոնական վիճակագրություն:
ԱՊՀ մասնակից պետությունների վիճակագրական ծառայությունների ղեկավարների խորհրդի 70-րդ նիստին քննարկվել են հետևյալ հարցերը. ԱՊՀ-ի Տնտեսական խորհրդի կողմից «Անկախ Պետությունների Համագործակցության մասնակից պետությունների վիճակագրական ծառայությունների ղեկավարների խորհրդի 2020-2023 թվականների գործունեության հաշվետվությունը» քննարկման վերաբերյալ, «ԱՊՀ վիճակագրության զարգացում» ծրագրի իրականացման աշխատանքների ընթացքի մասին, ԱՊՀ տարածաշրջանում արժույթների գնողունակության համարժեքության վրա հիմնված միջազգային համադրումների առաջընթացի մասին, ԱՊՀ երկրներում պարենային ռեսուրսների հաշվեկշիռների ձևավորման աշխատանքների առաջընթացի մասին, «ԱՊՀ վիճակագրության զարգացում» ծրագրի ընդլայնման առաջարկների մասին, ԱՊՀ մասնակից պետությունների վիճակագրական ծառայությունների ղեկավարների խորհրդի 71-րդ նիստի վերաբերյալ ու ԱՊՀ մասնակից պետությունների վիճակագրական ծառայությունների ղեկավարների խորհրդի 70-րդ նիստի կոմյունիկեի մասին:

6.Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝

Հայաստանը համաժողովին ներկայացրեց «Էլեկտրոնային հաշվետվությունների համակարգը Արմստատում» խորագրով շնորհանդես:
«Տվյալների կառավարում. տեղեկատվական ռեսուրսների ինտեգրում ազգային մակարդակում» խորագրով նիստի շրջանակում քննարկվեցին առաջացող հետևյալ մարտահրավերները. տեղեկատվության առկա աղբյուրների գույքագրում և դրանց որակի գնահատում, օգտագործվող հասկացությունների, սահմանումների, դասակարգումների, ձևաչափերի և տեխնոլոգիաների ներդաշնակեցում, տվյալների գաղտնիության պաշտպանություն և այլ խնդիրներ:
«Վիճակագրական կրթություն. մարտահրավերներ և առաջնահերթություններ» խորագրով նիստում քննարկվեցին վիճակագրության ոլորտում մասնագիտական վերապատրաստման առաջնահերթ ուղղությունները, այդ թվում՝ կապված հասարակության թվայնացման և վիճակագրությունում կիրառվող նորարարական տեխնոլոգիաների հետ, վիճակագրության ոլորտում մասնագիտական և կրթական չափորոշիչների բարելավման հարցերը:
«Վիճակագրական տվյալների հավաքագրման, մշակման, վերլուծության և տարածման նոր տեխնոլոգիաներ» խորագրով նիստում քննարկվեցին վիճակագրական տվյալների հավաքագրման, մշակման, վերլուծության և տարածման

ժամանակակից միտումները. աշխարհագրական տեղեկատվական համակարգերի ներդրում, Բիզնես բանականություն (BI) և առցանց վերլուծական մշակման տեխնոլոգիաների (OLAP) կիրառում, տվյալների և մեթատվյալների փոխանակման միջազգային ստանդարտներ (SDMX) և որակի ստանդարտներ՝ հիմնված Ընդհանուր վիճակագրական բիզնես-գործընթացի (GSBPM), Ընդհանուր վիճակագրական տեղեկատվության (GSIM), Վիճակագրական կազմակերպությունների համար Ընդհանուր գործունեության (GAMSO) մոդելների վրա, խելացի տվյալներ – բաց կապակցված տվյալներ, որոնք համապատասխանում են Գտնելիության, Մատչելիության, Փոխգործունակության, Կրկնակի օգտագործման (FAIR տվյալներ) սկզբունքներին:
«Մեծ և վարչական տվյալներ» խորագրով նիստի շրջանակում քննարկվեցին դրանց հասանելիության իրավական և կազմակերպչական դաշտի ստեղծման, դրանց ստացման և փոխանակման տեխնոլոգիաների հետ կապված մարտահրավերները և այլ հարցեր:
«Արհեստական բանականություն և պաշտոնական վիճակագրություն» խորագրով նիստում քննարկվեցին հարցեր կապված վիճակագրությունում Արհեստական բանականության օգտագործման հետ, ինչը հնարավորություն կընձեռի ավտոմատացնել որոշակի գործընթացներ, օգտագործել նոր տեսակի տվյալներ և մշակել մեծ ծավալի տեղեկատվություն:

7.Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը՝

Համագործակցության գործունեության շրջանակում տեղեկացվեց, որ նախատեսվում է դիտարկել ԱՊՀ տարածաշրջանում մասնագիտական վիճակագրական հանրության հզորացմանն ուղղված աշխատանքների իրականացման փորձն ու հեռանկարները, ներկայացնել ԱՊՀ վիճակագրական կոմիտեի աշխատանքի նոր ուղղությունը վիճակագրությունում մասնագիտական կարողությունների զարգացման վերաբերյալ, որը կիրականացվի «ԱՊՀ վիճակագրության զարգացում» ծրագրի շրջանակում:
Նշվեց նաև, որ հատուկ ուշադրություն կդարձվի ռեգիստրների և այլ տվյալների աղբյուրների հիման վրա հիմնված 2030 թվականի մարդահամարի փուլի նախապատրաստմանը և անցկացմանը, ինչպես նաև այլընտրանքային աղբյուրների հիման վրա Կայուն զարգացման նպատակների իրականացման մոնիտորինգի բարելավմանը:

8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները՝

Մասնակցությունը համաժողովին և ԱՊՀ մասնակից պետությունների վիճակագրական ծառայությունների ղեկավարների խորհրդի 70-րդ նիստին հնարավորություն ընձեռեց ազգային վիճակագրական ծառայությունների ներկայացուցիչներին՝ ծանոթանալու վերջին զարգացումներին ԱՊՀ տարածաշրջանում, կիսվելու փորձով, ինչպես նաև քննարկելու վիճակագրության առջև ծառացած մարտահրավերները, համագործակցության ուղիները և գործողություններն՝ ուղղված ազգային վիճակագրական համակարգերի հետագա զարգացմանը:

9.Ստորագրությունը, ամսաթիվը՝

ՀՀ վիճակագրական կոմիտեի նախագահ Ստեփան Մնացականյան

07.10.24թ.

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԾԱԽՍԵՐԻ ՎԵՐՋՆԱՀԱՇՎԱՐԿԻ ՄԱՍԻՆ

1. Մարմնի անվանումը - ՀՀ վիճակագրական կոմիտե

2. Գործուղման մասին իրավական ակտի համարը - Հայաստանի Հանրապետության Վարչապետի 23.09.24թ. թիվ N 860 - Ա որոշում

3. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը (մասնագիտությունը)

Ստեփան Մնացականյան – Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտեի նախագահ

(թվարկել՝ պատվիրակություն գործուղելու դեպքում)

4. Գործուղման վայրը – Ուզբեկստանի Հանրապետություն (Տաշքենդ)

5. Գործուղման ժամկետները՝ 2024թ. հոկտեմբերի 1-5-ը

6. Գործուղման ծախսերի ֆինանսավորման աղբյուրը

1) հրավիրող կողմի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը - ԱՊՀ Միջպետական Վիճակագրական Կոմիտե

(թվարկել՝ ճանապարհածախս, գիշերավարձ, օրապահիկ և այլն)

ճանապարհածախս, գիշերավարձ

---

2) պետական բյուջեի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը
(ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2335-Ն որոշմանը համապատասխան)
(ընդգծել ծախսերի փոխհատուցման տարբերակը)

☐ ա. փաստացի կատարված ծախսերը հիմնավորող փաստաթղթերի հիման վրա՝ դրանցով սահմանված չափով, բայց ոչ ավելի, քան ցանկով նախատեսված չափերը

☐ բ. գործուղման անհատական իրավական ակտով տվյալ գործուղման փաստացի կատարված ծախսերի հատուցման պահանջի համաձայն

Ծախսի տեսակը	Անուն, ազգանուն	Անուն, ազգանուն	Անուն, ազգանուն	Անուն, ազգանուն	Ընդամենը (հազ. դրամ)

		1	2	3	...	
Ճանապար-հածախս	Ավիածառայության տեսակը (էկոնոմ դաս, բիզնես դաս)					
	Ավիատոմսի արժեքը (դրամ)					
Գիշերավարձ	Վճարը 1 օրվա համար (արտարժույթով)					
	Վճարը 1 օրվա համար (դրամ)					
	Օրերի քանակը					
	Ընդամենը (դրամ)					
Օրապահիկ	Վճարը 1 օրվա համար (արտարժույթով)					
	Վճարը 1 օրվա համար (դրամ)					
	Օրերի քանակը					
	Ընդամենը (դրամ)					
Այլ ծախսեր	Հակահամաճարակային նմուշառումների վճար					
	Մուտքի արտոնագրի վճար					
	Այլ ծախսեր (նկարագրել)					
Ընդամենը ծախսեր (հազ. դրամ)						

Գլխավոր ֆինանսիստի ստորագրությունը, ամսաթիվը

Գլխավոր քարտուղար Ա. Հայրապետյան

07.10.24թ